

## Երրորդ փուլ

### GIS (USZ) տվյալների և վերլուծությունների վիզուալիզացիա

Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (Geographic Information Systems) տարածական տվյալների բազաների ստեղծման, տարածաժամանակային վերլուծությունների և դրանց վիզուալիզացիայի համակարգ է, որն օգտագործվում է ժամանակակից տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Այն լայն կիրառում ունի կառավարման, ապահովագրության, մարկետինգի, ենթակառուցվածքների (տրանսպորտ, էլեկտրամատակարարում, գազամատակարարում, հեռահաղորդակցություն), գյուղատնտեսության, ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում:

Այս փուլում շեշտը կդրվի ստացված արդյունքների ներկայացման հմտությունների ուսուցմանը: Հմտությունները կկիրառվեն նախագծի արդյունքների քարտեզների ստեղծման նպատակով: Ինչպես նաև կուսուցանվեն տվյալների առցանց ներկայացման հնարավորությունները: Փուլի ավարտին, մասնակիցները փոքրիկ պրեզենտացիաներով կներկայացնեն իրենց նախագծերի արդյունքները:

Դասընթացը կվարի GIS, աղետների ռիսկերի կառավարման և ֆիզիկական աշխարհագրության մասնագետ Ստեփան Խաչատրյանը:

Դասընթացի երրորդ փուլը կունենա հետևյալ բովանդակությունը՝

1. Տվյալների և վերլուծության արդյունքների ներկայացման գործիքակազմ:
2. Արդյունքների առցանց ներկայացում:
3. Հիմնական քարտեզագրական ձևավորում:
4. GIS նախագծերի ներկայացում և քննարկում:

Տևողությունը 20 ժամ՝ շաբաթական 2 պարապունք 2.5 ժամով:

Արժեքը՝ 100000 ՀՀ դրամ